

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ  
ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

*Բանալի բառեր – հին հայերենի անվանական հոլովումը, կուտակական հոլովաթվային թեքոյթներ, առանձնական հոլովանիշ և թվանիշ կազմիչներ, ոչ կանոնիկ անցումային փուլ, հավաքական հոգնակերտներ*

Ինչպես հայտնի է, ավանդական ձևաբանական տիպաբանությունը սեպիրյան-գրիներգյան մոտեցման լույսի ներքո բարեփոխված տեսքով հենվում էր երկու հիմնական հարաչափի՝ ձուլման և համադրականության աստիճանի վրա, և ըստ առաջին հարաչափի՝ տարբերակվում էին անջատական, կցական և թեքական (ձուլող), իսկ ըստ երկրորդի՝ վերլուծական, համադրական և բազմահամադրական տիպեր<sup>1</sup>: Արդի լեզվաբանական տիպաբանության մեջ համադրականության հարաչափը պահպանվում է անփոփոխ՝ վերլուծական, համադրական և բազմահամադրական ենթատիպերով, իսկ ձուլման հարաչափի փոխարեն սովորաբար նկատի են առնվում երեք առանձին հարաչափեր՝ ձուլում (fusion), արտահայտողականություն (exponence) և տարբերակայնություն (variance, flexivity): Ըստ ձուլման հարաչափի՝ տարբերակվում է երեք տիպ. 1) անջատող կամ անջատական (isolating), որտեղ ձևաբանական ցուցիչը ինքնուրույն հնչյունական բառ է, 2) կցող կամ շղթայակցական (concatenative), որտեղ ձևաբանական ցուցիչը կցվում է հիմքին մասնիկի տեսքով, և հնարավոր է կատարել ուղղազիծ բաժանում, 3) ոչ զծային (non-linear), որը ենթադրում է հիմքի ձևափոխություն: Արտահայտողականության հարաչափը հաշվի է առնում, թե քանի քերականական իմաստ է միաժամանակ արտահայտվում նույն ձևային միջոցով: Ուստի տարբերակում են առանձնական (separative) և կուտակական (cumulative) ցուցիչներ: Իսկ տարբերակայնության հարաչափի տեսանկյունից նկատի են առնվում կազմիչների ընդհանրական կամ տարբերակային բնույթը և, ըստ այդմ, հարացույցների մեկ միասնական տիպի կամ տարբեր տիպերի առկայությունը դիտարկվող լեզուներում<sup>2</sup>: Եվ եթե ավանդական մոտեցմամբ կցա-

<sup>1</sup> Հմմտ. **Comrie B.**, Language Universals and Linguistic Typology: Syntax and Morphology, The University of Chicago Press, 2<sup>nd</sup> ed., 1989, p. 42-52, **Whaley L.**, Introduction to Typology: The Unity and Diversity of Language, Thousand Oaks-London-New Delhi, 1997, p. 127-136:

<sup>2</sup> Տե՛ս **Bickel B., Nichols J.**, Inflectional Morphology // **Shopen T.** (ed.), Language Typology and Syntactic Description, Vol. III: Grammatical Categories and the Lexicon, 2<sup>nd</sup> ed., Cambridge University Press, 2007, p. 172-193, **Velupillai V.**, An Introduction to Linguistic Typology, Amsterdam/Philadelphia,

կան (կցող) տիպին վերագրվում էր կազմիչների առանձնականություն (կամ ձևային մասնատելիություն), իսկ թեքական (ձուլող) տիպին՝ կազմիչների կուտակականություն (կամ ձևային անմասնատելիություն)<sup>1</sup>, արդի մոտեցման համաձայն՝ ինչպես կցող, այնպես էլ ոչ գծային տիպերը սկզբունքորեն կարող են թե՛ առանձնական և թե՛ կուտակական բնույթ ունենալ: Բացի այդ, այժմ համեմատվում և դասակարգվում են ոչ թե ամբողջական լեզվակառուցվածքները (քանի որ միևնույն լեզուն կարող է միաժամանակ հանդես բերել հիշյալ հարաչափերի տարբեր համակցություններով ձևեր), այլ առանձին ձևաբանական գործընթացները և առանձին կազմիչները (օր.՝ հոլովական, թվային, կերպաժամանակային կազմիչները են)<sup>2</sup>: Արտահայտողականության և ձուլման հարաչափերի զուգակցմամբ կազմվում են հետևյալ վեց իրապես վկայված համակցությունները՝ անջատող առանձնական, կցող առանձնական, ոչ գծային առանձնական, անջատող կուտակական, կցող կուտակական, ոչ գծային կուտակական<sup>3</sup>: Տարբերակայնությունը ևս ձուլման և արտահայտողականության հետ կարող է կազմել տարբեր համակցություններ, որոնց մի մասը բավական հաճախադեպ է (օր.՝ *տարբերակային կցող* և *տարբերակային ոչ գծային*), իսկ մյուսները՝ հազվադեպ<sup>4</sup>: Արդ, հայերենում հոլովման տիպաբանական զարգացումը կդիտարկենք ըստ այդ երեք հարաչափերի՝ անհրաժեշտաբար զուգահեռներ անցկացնելով ավանդական բնորոշումների հետ: Համադրականությանը չենք անդրադառնա, քանի որ հոլովման համադրական տիպը հայերենում պահպանվել է անփոփոխ:

Հայտնի է, որ հնդեվրոպական անվանական հոլովումը ավանդական ձևաբանական տիպաբանության տեսանկյունից բնութագրվել է թեքական-համադրական կառուցվածքով: Ըստ այդմ՝ 1) մեկ վերջավորությունն ի վիճակի է եղել արտահայտելու մեկից ավելի քերականական իմաստներ: Եզակի, երկակի և հոգնակի ձևերը միևնույն իմաստների արտահայտության համար ունեցել են տարբեր կազմիչներ: Մասամբ էլ տարբեր կազմիչներ են կիրառվել միևնույն հոլովաթվային ձևի համար տարբեր բառախմբերի դեպքում, այսինքն՝ առկա են եղել մեկից ավելի հոլովական տիպեր, 2) որոշակի դեպ-

---

2012, p. 95-110: Հմմտ. նաև **Plungian V. A.**, Agglutination and Flexion // **Haspelmath M., König E., Oesterreicher W. and Raible W.** (eds.), Language Typology and Language Universals: An International Handbook, vol. 1, Berlin-New York, 2001, p. 669-673:

<sup>1</sup> Հմմտ. **Comrie B.**, նշվ. աշխ., էջ 43-45, **Plank F.**, Split Morphology: How Agglutination and Flexion Mix // Linguistic Typology 3, 1999, p. 281-282, **Plungian V. A.**, նշվ. աշխ., էջ 672-673:

<sup>2</sup> Տե՛ս **Velupillai V.**, նշվ. աշխ., էջ 95-96, **Bickel B., Nichols J.**, Sampling Case and Tense Formatives // **Dryer M., Haspelmath M.** (eds.), The World Atlas of Language Structures Online, Leipzig: Max Planck Institute for Evolutionary Anthropology, 2013 (Available online at <http://wals.info/chapter/s5>, Accessed on 2020-08-14.):

<sup>3</sup> Տե՛ս **Velupillai V.**, նշվ. աշխ., էջ 104-106:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 106-108:

քերում տեղի է ունեցել հիմքի և վերջավորության սահմանային տարրերի ձուլում, 3) եզակի ուղղականը մնացած հոլովների նման կազմվել է հոլովական հիմքին համապատասխան վերջավորության ավելացմամբ (բայց երբեմն էլ բնութագրվել է գրոյական վերջավորությամբ), 4) հոլովների և հոլովական տիպերի տարբերակման հարցում որոշակի դեր են խաղացել նաև ներքին թեքումը (ձայնդարձը) և ազատ (շարժական) շեշտը<sup>1</sup>: Իսկ արդի հնդեվրոպաբանական մոտեցման համաձայն՝ հ.-ե. հոլովական տիպերը (հոլովական հարացույցները) սկզբնապես միմյանցից տարբերվել են ոչ այնքան կազմիչների բազմազանությամբ, որքան շեշտաձայնդարձային հերթագայությունների տարատիպ օրինաչափություններով<sup>2</sup>:

Հ.-ե. վերոհիշյալ տիպաբանական հատկանիշները ձուլման, արտահայտողականության և տարբերակայնության տեսանկյունից կարելի է բնորոշել հետևյալ կերպ: Հ.-ե. նախալեզուն կիրառում էր ինչպես կցող (մասնիկավորումը), այնպես էլ ոչ գծային (ներքին թեքումը և ազատ շեշտը) ձևաբանական միջոցներ: Մյուս կողմից, թեև մասնիկավորումը հիմնականում կցող բնույթ ուներ (հիմքը և թեքույթները հստակ առանձնացվում էին), բայց որոշակի դեպքերում տեղի էր ունեցել հիմքի և վերջավորության սահմանային տարրերի ձուլում<sup>3</sup>: Բացի այդ, հ.-ե. անվանական հոլովումը կուտակական հոլովաթվային կազմիչների և տարբեր հոլովական տիպերի շնորհիվ բնութագրվում էր կուտակականության և տարբերակայնության հատկանիշներով:

Հին հայերենում հ.-ե. հիմնական տիպաբանական հատկանիշները ընդհանուր առմամբ պահպանվել են (որոշ փոփոխություններով): Այսպես, ներքին թեքումը հ.-ե. դրության համեմատությամբ ավելի սահմանափակ դրսևորում ունի, քանի որ պատմականորեն ձայնդարձի այս կամ այն աստիճանի մասնակի ընդհանրացման միտում է գործել: Իսկ *բաղաձայն+ր/դ* ձայնորդահանգ հիմքերի հարացույցում գրեթե լիովին ընդհանրացել է հ.-ե. ձայնդարձի \*e լիաձայն աստիճանը<sup>4</sup>. հմմտ. հ. հայ. եզ. ուղղ.-հայց. *դուստր*, եզ. սեռ.-տր. *դստեր*, եզ. գործ. *դստեր-ք*, հոգ. ուղղ. *դստեր-ք*, հոգ. սեռ.-տր.-բաց. *դստեր-*

<sup>1</sup> Հմմտ. **Beekes R. S. P.**, Comparative Indo-European Linguistics: An Introduction, 2<sup>nd</sup> ed., revised and corrected by Vaan M. de, Amsterdam/Philadelphia, 2011, p. 185 ff., **Meier-Brugger M.**, Indogermanische Sprachwissenschaft, 9, durchgesehene und ergänzte Aufl., unter Mitarbeit von **Fritz M. und Mayrhofer M.**, Berlin/New York, 2010, S. 329-353, **Ավետյան Ս.**, Լեզուների համեմատական ուսումնասիրության հիմնական սկզբունքները (համեմատական լեզվաբանության դասախոսություններ), Երևան, 2014, էջ 10-11:

<sup>2</sup> Տե՛ս **Meier-Brugger M.**, նշվ. աշխ., էջ 336-353, **Ավետյան Ս.**, Շեշտաձայնդարձային հերթագայությունների ներհարացույցային դերը ավանդական և արդի հնդեվրոպաբանության տեսանկյունից // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2015, թիվ 3, էջ 156-173:

<sup>3</sup> Տե՛ս **Beekes R. S. P.**, նշվ. աշխ., էջ 185: Հմմտ. նաև՝ **Meier-Brugger M.**, նշվ. աշխ., էջ 329, 332-333:

<sup>4</sup> Հմմտ. **Matzinger J.**, Untersuchungen zum altarmenischen Nomen: Die Flexion des Substantivs, Dettelbach, 2005, S. 71-79, **Godel R.**, An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden, 1975, p. 96:

*ց/դստեր-աց* ևն: Չայնդարձը համեմատաբար լավ պահպանվել է *բաղաձայն+ն* ձայնորդահանգ հիմքերի հոլովման հարացույցում և նախագրային հայերենում նույնիսկ համաբանությամբ տարածվել սկզբնապես այլ հիմքերի պատկանող մի շարք բառերի վրա<sup>1</sup>: Մյուս կողմից՝ նախագրային հայերենում նոր ձայնավորական հերթագայություններ են առաջացել նախաշեշտ դիրքում որոշակի ձայնավորների ու երկբարբառների թուլացման/սղման և ամփոփման հետևանքով: Իհարկե վերջիններս դեռևս չեն դարձել քերականացված ձևահնչությային հերթագայություններ, ուստի չեն կարող դիտվել իբրև բառի բուն իմաստով ներքին թեքում: Այդուհանդերձ, քանի որ շեշտը ուղիղ հոլովներում ընկնում է ուղիղ հոլովական հիմքի, իսկ թեք հոլովներում՝ թեք հիմքակազմիչ մասնիկի վրա, դրանով իսկ շեշտի տեղաշարժը և վերջինիս հետ կապված ձայնավորական հերթագայությունը օժանդակ կերպով նպաստում են ուղիղ և թեք հոլովների տարբերակմանը. հմմտ. եզ. ուղղ.-հայց. *սի՛րտ-Ø*, եզ. սեռ.-տր. *սրտ-ի՛-Ø*, եզ. գործ. *սրտ-ի՛-ւ*, հոգ. ուղղ. *սի՛րտ-ք*, հոգ. հայց. *սի՛րտ-ս*, հոգ. սեռ.-տր.-բաց. *սրտ-ի՛-ց*, հոգ. գործ. *սրտ-ի՛-ւ-ք* ևն: Թերևս կարելի էր մտածել, թե հայերենում ընդհանրացել է հ.-ե. անբուն հիմքերին բնորոշ շարժական շեշտը (որոշ փոփոխություններով), կամ վերջինս գոնե նպաստել է հայերենի շարժական շեշտի առաջացմանը<sup>2</sup>: Բայց մեզ ավելի հավանական է թվում, որ հայերենի վերջնավանկային շարժական շեշտը առաջացել է ինքնուրույն ճանապարհով: Նկատենք, որ, ի տարբերություն հին հայերենի, որտեղ բառահիմքին ցանկացած նոր վանկի ավելացումը ինքնաբերաբար հանգեցնում է շեշտի տեղաշարժի դեպի աճող վերջնավանկ, հ.-ե. շեշտի տեղաշարժը ուղղակիորեն կախված չէր նոր վանկի հավելումից. հմմտ. հ.-ե. \*pH₂ter- «հայր» բառի եզ. սեռ. \*pH₂tr-és և հոգ. ուղղ. \*pH₂tér-es ձևերի հակադրությունը: Հայտնի է նաև, որ նախագրային հայերենում վերջընթեր ուժգնության շեշտը հանգեցրել է վերջնավանկային ձայնավորի թուլացման՝ ձայնորդահանգ փակ վանկերի դեպքում, և անկման՝ մնացած դեպքերում, թեև որոշ մանրամասներ վիճահարույց են<sup>3</sup>: Եվ քանի որ դեռևս վերջընթեր շեշտի առկայության ժամանակ թեք հոլովները եզակի ուղղականի համեմատությամբ ընդհանուր առմամբ մեկ վանկով ավելի էին<sup>4</sup>, դա արդեն ինքնին հայերենի վերջնավանկային շարժական շեշտի առաջացման լիովին բավարար նախադրյալ էր. հմմտ. եզ. ուղղ. \*դո՛ւստիր > հ. հայ. *դո՛ւստր*, եզ. սեռ. \*դուստե՛րոռ >

<sup>1</sup> Sté u Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 2<sup>ème</sup> éd., Vienne, 1936, p. 83-84, Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 254-258, Джаукян Г. Б., Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 107-117:

<sup>2</sup> Sté u Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 150-159:

<sup>3</sup> Հմմտ. Meillet A., նշվ. աշխ., էջ 55-59, Godel R., նշվ. աշխ., էջ 99-106:

<sup>4</sup> Հնդ որում՝ դա մասամբ հայերենում նախալեզվյան սկզբնական դրության օրինաչափ հնչյունական զարգացման, մասամբ էլ զանազան համաբանական-ձևաբանական փոփոխությունների արդյունք էր (հմմտ. Matzinger J., նշվ. աշխ., էջ 85-145):

\**դուստե՛ր* > հ. հայ. *դստե՛ր*, եգ. ուղղ. \**մա՛րդոհ* > հ. հայ. *մա՛րդ*, եգ. սեռ. \**մարդո՛ր* > հ. հայ. *մարդո՛ր* ն: Այսպիսով՝ թեև հին հայերենում ձայնդարձի և շեշտի գործառությունը ավելի սահմանափակ է նախալեզվյան վիճակի համեմատությամբ, բայց դրանք շարունակում են օժանդակ ձևաբանական դեր կատարել: Իսկ հոլովանշման հիմնական միջոցը մասնիկավորումն է, և կազմիչները գերազանցապես կուտակական հոլովաթվային ցուցիչներ են: Հետևաբար կուտակականության հատկանիշը ևս հին հայերենում պահպանվել է. հմմտ. եգ. սեռ.-տր. *արտ-ի-Յ*, *գետ-ն-յ*, *քաղաք-ի-Յ*, հոգ. սեռ.-տր.-բաց. *արտ-ի-ց*, *գետ-ն-ց*, *քաղաք-ա-ց* ն: Բացառություն է գործիական հոլովը՝ առանձնական հոլովանիշ (*ւ/վ/բ*) և հոգնակերտ (*ք*) ցուցիչներով. հմմտ. եգ. գործ. *արտ-ի-ւ*, *գետ-ն-վ*, հոգ. գործ. *արտ-ի-ւ-ք*, *գետ-ն-վ-ք*: Ինչ վերաբերում է տարբերակայնությանը, հին հայերենում ևս առկա են տարբեր հոլովական տիպեր, թեև հ.-ե. հոլովական տիպերը զգալիորեն փոփոխվել և վերախմբավորման են ենթարկվել<sup>2</sup>: Հին հայերենում տարբեր հոլովական տիպերի առկայությունը պայմանավորված է ոչ այնքան հոլովական վերջավորությունների բազմազանությամբ, որքան հոլովական հիմքերի կազմության և հիմքային տարբերակների փոխհարաբերության տարատիպ օրինաչափություններով<sup>3</sup>: Հոլովական կազմիչների որոշակի տարբերակայնություն է նկատվում միայն եզակի թվում, բայց հոգնակիում միասնական կազմիչներ են առկա բոլոր հոլովական տիպերի դեպքում, եթե հաշվի չառնենք գործիականի տարբերակայնությունը (*ւ/վ/բ*), որը բնորոշ է թե՛ եզակիին և թե՛ հոգնակիին<sup>4</sup>: Իսկ ձուլման հարաչափի տեսանկյունից մասնիկավորումը հին հայերենում պահպանում է կցող բնույթը: Եթե նույնիսկ եգ. բաց. *բան-է*, *արտ-է* և նման ձևերում իրոք տեղի է ունեցել թեք հիմքակազմիչ մասնիկի կորուստ ձայնավորական վերջավորությունից առաջ (*բան-է* < \**բան-ի-է* նն)<sup>5</sup>, ապա պետք է ընդունել, որ եզակի բացառականի հոլովական հիմքի և վերջավորության ձևաբանական փոխհարաբերությունը վերախմբատավորվել է շնորհիվ այն բանի, որ ՈԻ հոլովման մի խումբ բառերի ուղիղ հոլովական հիմքից բացառականի համաբանական նոր ձև է կազմվել (հմմտ. *ծով-է*, *գահ-է*), մինչդեռ այլ բառերի դեպքում պահպանվել է հիմքակազմիչ *ու* մասնիկով սկզբնական ձևը (հմմտ. *խրատ-ու-է*, *գարդ-ու-է*), իսկ որոշ դեպքերում էլ զուգաձևություն է առկա (հմմտ. *դաս-ու-է/դաս-է*): Ըստ այդմ՝ ձայնավորական հիմքով հոլովական տիպերի եզակի բացառականը հին հայերենում համաժամանակյա տեսանկյունից կազմվում է մասամբ թեք հոլովական հիմ-

<sup>1</sup> Տե՛ս Ավետյան Ս., Որքանով թեքական կամ կցական է հին հայերենի անվանական հոլովումը // «ԲԵՇ. Բանասիրություն», 2020, թիվ 3, էջ 40-53:

<sup>2</sup> Հմմտ. Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 225-265, Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 99-137:

<sup>3</sup> Տե՛ս Туманян Э. Г., Древнеармянский язык, Москва, 1971, с. 177-179:

<sup>4</sup> Հմմտ. Meillet A., Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913, S. 45, Clackson J., Classical Armenian // Woodard R. D. (ed.), The Ancient Languages of Asia Minor, Cambridge University Press, 2008, p. 131:

<sup>5</sup> Տե՛ս Туманян Э. Г., նշվ. աշխ., էջ 178-179: Սակայն հմմտ. Godel R., նշվ. աշխ., էջ 106, ծան.:

քից (որը ձևով համընկնում է եզակի սեռական-տրականին. հմմտ. *խրատ-ու-է*), մասամբ էլ՝ ուղիղ հիմքից (որը համընկնում է եզակի ուղղական-հայցականին. հմմտ. *ծով-է, քան-է*)<sup>1</sup>: Հետևաբար եզ. բաց. *քան-է, ծով-է, քաղաք-է* և նման ձևերում առնվազն համաժամանակյա տեսանկյունից ձուլում չկա: Ո հոլովման մի խումբ բառերի եզակի ներգոյականի *ուլ-*ով ձևում (հմմտ. եզ. ուղղ.-հայց. *հին, առաջին*, եզ. սեռ.-տր. *հն-ո-յ, առաջն-ո-յ*, եզ. ներգ. *հն-ուլ, առաջն-ուլ*) նույնպես հիմքի և վերջավորության ձևաբանական փոխհարաբերությունը վերաիմաստավորվել է, քանի որ թեք հիմքակազմիչ *n* ձայնավորը *ւ* վերջավորությունից առաջ վերածվել է *ու-*ի, և *ուլ-*ը սկսել է ընկալվել որպես մեկ միասնական ձևաբանական տարր: Ըստ այդմ՝ հ. հայ. *հն-ուլ, առաջն-ուլ* տիպի ներգոյականը կազմվում է ուղիղ հոլովական հիմքին *ուլ* կազմիչի ավելացմամբ և կցող մասնիկավորմամբ: Եվ վերջապես *քաղաքայն-ն* հանգով բառերի գործիականում հիմքի վերջահանգ *ն*-ի մասնակի առնմանումը *ք* վերջավորությանը (եզ. գործ. *հարսամ-ք < \*հարսան-ք* են) և *ի* հանգով բազմավանկ բառերի եզակի թեք հոլովներում վերջահանգ *ի* ձայնավորի առնմանական հնչյունափոխությունը թեք հիմքակազմիչ *n* և *ա* մասնիկների ազդեցությամբ<sup>2</sup> (հմմտ. եզ. ուղղ.-հայց. *այգի-Օ*, եզ.սեռ.-տր. *այգու-յ < \*այգի-ո-յ*, եզ. գործ. *այգեա-ւ < \*այգի-ա-ւ* են) չեն խախտում հիմքի և վերջավորության միջսահմանագիծը, այսինքն՝ դարձյալ ձուլում չկա: Հետևաբար կարելի է ասել, որ մասնիկավորման կցող բնույթը հին հայերենի անվանական հոլովման համակարգում դրսևորվում է առանց բացառության:

Բայց նախագրային հայերենում տեղի է ունեցել տիպաբանական մեկ կարևոր փոփոխություն: Շեշտահաջորդ վերջնականների թուլացման և/կամ սղման հետևանքով սկզբնական թեքությունները և հիմքի վերջահանգ ձայնավորները եզակի ուղղականում և հայցականում ընկել են՝ հանգեցնելով այդ երկու հոլովների նույնաձևացմանը, բայց պահպանվել են թեք հոլովներում, այնպես որ եզակի ուղղական-հայցականը հին հայերենում իբրև ուղիղ հոլովական հիմք և ելակետային ձև է ծառայում թեք հոլովական հիմք(եր)ի և մնացած հոլովների կազմության համար: Մյուս կողմից, թեև ձևաբանական վերլուծության գիտական սկզբունքները պահանջում են ձայնավորական հիմքով հոլովական տիպերի հիմքային ձայնավորները դիտել իբրև թեք հիմքակազմիչ մասնիկներ (այդ թվում՝ եզ. սեռ.-տր. *սրտ-ի-Օ, քաղաք-ի-Օ, ծով-ու-Օ* և նման ձևերում)<sup>3</sup>, բայց վերջիններիս բացակայությունը ոչ միայն եզակի ուղղական-հայցականում, այլև որոշ թեք հոլովներում (հմմտ. եզ. բաց. *սրտ-է, ծով-է, քաղաք-է*, եզ. ներգ. *հն-ուլ, առաջն-ուլ* են) նկատելիորեն խախտում էր թեք հիմքակազմիչ ձայնավորների կարգավիճակը որպես այդպիսին՝ նպաստելով

<sup>1</sup> Հմմտ. **Godel R.**, նշվ. աշխ., էջ 36, նաև՝ էջ 33, ծան. 22 և էջ 106, ծան.:

<sup>2</sup> Հմմտ. **Джаукян Г. Б.**, նշվ. աշխ., էջ 28, նաև՝ էջ 24:

<sup>3</sup> Տե՛ս **Ավետյան Ս.**, Որքանով թեքական կամ կցական է հին հայերենի անվանական հոլովումը:

խոսողների կողմից այդ ձայնավորների և բուն վերջավորությունների կապակցությունների իբրև միասնական կազմիչներ գիտակցվելուն: Հայտնի է, որ խոսողների գիտակցության մեջ ձևաբանական վերլուծությունների արդյունքում ձևավորվող գործնական կանոնները և ընդհանրացումների սխեմաները հաճախ կարող են չհամընկնել այդ նույն լեզվական ձևերի գիտական նկարագրությանը և լեզվաբանների կողմից սահմանվող նկարագրական օրինաչափություններին<sup>1</sup>: Մյուս կողմից՝ համաբանական-ձևաբանական փոփոխությունների ուղղվածության հարցում կարևոր դեր է խաղում այն հանգամանքը, թե խոսողների գիտակցության մեջ քերականական ձևերը ինչպես են վերլուծության ենթարկվում, և նրանք ինչպես են ըմբռնում հարացույցի անդամների ձևաբանական փոխհարաբերությունը<sup>2</sup>: Արդ, հին հայերենի հետագա զարգացման ընթացքը (հմմտ. միջին և արդի հայերենների գործիականի *-ու*, արդի արևելահայերենի բացառականի *-ից*, *-ուց* վերջավորությունները) վկայում է, որ խոսողները (թերևս արդեն հին հայերենում) թեք հիմքակազմիչ ձայնավորների և բուն վերջավորությունների կապակցությունները ընկալել են որպես միասնական կազմիչներ:

Միջին հայերենից սկսած՝ անվանական հոլովումը ենթարկվել է էական փոփոխությունների, որոնցից տիպաբանական առումով ամենակարևորը կուտակական հոլովաթվային թեքությունների փոխարինումն է առանձնական հոլովանիշ և թվանիշ կազմիչներով: Տիպաբանորեն հարացույցի ոչ նշույթավորված հոլովաձևը (եզակի ուղղականը կամ բացարձակ հոլովը) սովորաբար զրոյական վերջավորություն է ունենում և իբրև հոլովական հիմք է ծառայում մնացած հոլովների և/կամ թեք հոլովական հիմքային տարբերակների կազմության համար այն լեզուներում, որոնք հանդես են բերում առանձնական հոլովանիշ և թվանիշ ցուցիչներ (հմմտ. ավանդական կցական լեզուները): Մինչդեռ հին հայերենը, ինչպես տեսանք, գերազանցապես կիրառում է կուտակական կազմիչներ, և մյուս կողմից՝ եզակի ուղղական-հայցականը իբրև ուղիղ հոլովական հիմք և ելակետային ձև է ծառայում թեք հոլովական հիմք(եր)ի և մնացած հոլովների կազմության համար: Հին հայերենի այդ ոչ կանոնիկ դրությունը լիովին հասկանալի է դառնում, եթե հաշվի առնենք, որ եզակի ուղղական-հայցականը զրոյական վերջավորությամբ ելակետային ձև է դարձել նախագրային հայերենում շեշտահաջորդ վերջնականների թուլացման և/կամ սղման հետևանքով, և որ արդեն միջին հայերենից սկսած կուտակական թեքությունները փոխարինվել են առանձնական կազմիչներով: Այսինքն՝ հին հայերենի ոչ կանոնիկ դրությունը պարզապես անցումային փուլ է տիպաբանորեն կանոնիկ հնդեվրոպական լեզվավիճակի

<sup>1</sup> Հմմտ. **Bybee J.**, Frequency of Use and the Organization of Language, Oxford, 2007, p. 74-100:

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում, ch. 3, p. 41-69, նաև՝ **Ավետյան Ս.**, Համաբանական փոփոխությունների երկու միտում արդի արևելահայերենի աորիստի հարացույցում (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն) // «ԲԵՀ. Բանասիրություն», 2020, թիվ 1, էջ 34-38:

(որտեղ եզակի ուղղականը և հայցականը մնացած հոլովների նման կազմվում էին հոլովական հիմքին կուտակական թեքությունների ավելացմամբ) և դարձյալ նույնքան կանոնիկ հետհինհայերենյան (միջինհայերենյան և աշխարհաբարյան) լեզվավիճակի (որտեղ եզակի ուղղական-հայցականը գրոյական վերջավորությամբ ելակետային ձև է, և միևնույն ժամանակ առկա են առանձնական հոլովանիշ և թվանիշ կազմիչներ) միջև:

Վերը ասվածից հետևում է, որ հ.-ե. անվանական հոլովման առանձին տիպաբանական հատկանիշները հայերենում փոփոխության են ենթարկվել ժամանակագրական տարբեր փուլերում և աստիճանաբար: Ուստի առաջին հայացքից կարող է թվալ, թե հին հայերենի գործիականի առանձնական հոլովանիշ և թվանիշ կազմիչներն էլ ոչ այլ ինչ են, քան հետագայում լայն թափ առած առանձնականության միտումի վաղ շրջանի դրսևորում: Բայց իրականում հինհայերենյան գործիականի կազմիչները և միջինհայերենյան ու աշխարհաբարյան առանձնական վերջավորությունները պատմականորեն միմյանցից անկախ և երկու միանգամայն տարբեր գործընթացների արդյունք են: Ակնհայտ է, որ հին հայերենի եզակի և հոգնակի գործիականի ձևաբանական փոխհարաբերությունը պատմականորեն ձևավորվել է ձայնավորական հիմքով հոլովական տիպերի եզակի և հոգնակի ուղղականի փոխհարաբերության (այն է՝ եզակի թվի գրոյական վերջավորության և հոգնակի թվի *ք* հոգնակերտի հակադրության) համաբանական հետևողությամբ՝ հմմտ. մի կողմից՝ եզ. ուղղ. *գետ, բան*, հոգ. ուղղ. *գետ-ք, բան-ք*, մյուս կողմից՝ եզ. գործ. *գետ-ն-վ, բան-ի-լ*, հոգ. գործ. *գետ-ն-վ-ք, բան-ի-լ-ք* ևն (անկախ այն բանից՝ արդյոք եզակի գործիականի ձևը հոգնակի գործիականից առաջացած հետադարձ կազմությո՞ւն է<sup>1</sup>, թե՞ սկզբնապես թվային տարբերակում չունեցող գործիականի ձևից հետագայում հոգնակիի ձև է տարբերակվել *ք* հոգնակերտի հավելումով<sup>2</sup>): Ամեն դեպքում *ք* ձևությո՞ղ խոսողների կողմից ընկալվել է որպես հոգնակերտ: Բայց, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Այտընյանը, անեզական բառերը (*կամք, վանք, աղօթք, միտք, փառք, կառք, անէծք* ևն) հին հայերենում *ք* հոգնակերտի կիրառության հետ կապված որոշակի անհարմարություններ էին ստեղծում, քանի որ, մի կողմից, լեզվական նորման պահանջում էր անեզական ամեն բառ քերականորեն միշտ իբրև հոգնակի գործածել (հոգնակի համաձայնեցումով), մյուս կողմից՝ իմաստի ճշտությունը պահանջում էր անեզական բառի եզակի և հոգնակի նշանակությունները ձևով միմյանցից տարբերակել: Արդ, լեզուն ուներ երկու ընտրություն. «կա՛մ անեզական բառը յոթնակի ձևերն մեջ իբրև եզակի գործածել, եւ կա՛մ յոթնակի ձևը վերցընել և ըսել եզականաբար՝ *վան, միտ, աղօթ* եւ այլն: Բայց հայ լեզուին ոգին եւ ազգային ճաշակը բնական կերպով մը խնդիրն

<sup>1</sup> Հմմտ. Matzinger J., նշվ. աշխ., էջ 136, նաև՝ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 224:

<sup>2</sup> Հմմտ. Godel R., նշվ. աշխ., էջ 103-104, Clackson J., The Linguistic Relationship between Armenian and Greek, Oxford UK and Cambridge USA, 1994, p. 70-72:



որոշած էին. արդէն բուն հին ժամանակներէն սկսեալ՝ միշտ ախորժելի եղած էր նաեւ շատ մը ըստ ինքեան եզակիներն ալ *ք* յանգել, որ ստորին եւ յետին դարուց նոր լեզուին մէջ քանի գացած աւելի յաճախած է<sup>1</sup>: Ըստ այդմ՝ սկզբնական եզակի ձևին զուգահեռ վկայված են արդէն «հին գրաբարի մէջ եզակի մտօր՝ *պատճառք. շնորհք. յատակք. յիսք. օրէնք. հաւատք. կրօնք*, եւ այլն.»<sup>2</sup>: Մեր կարծիքով, տվյալ դեպքում գործ ունենք *ք* հոգնակերտի գործառական ոլորտի համաբանական ընդլայնման միտումի հետ, որի շնորհիվ *ք* ձևույթը, թերևս նախագրային շրջանից սկսած, բովանդակության պլանում գործառում էր նաև զուտ բառակազմական արժեքով, թեև արտահայտության պլանում թվային համաձայնությունը ձևականորեն դեռ պահպանվում էր: *Ք* ձևույթի բառակազմական գործառույթը հատկապես ակնառու էր բայարմատից կամ աորիստի հիմքից կազմված անեզակական գործողության անուն գոյականների դեպքում, որոնք, իրենց բառային իմաստով պայմանավորված, առավելապես գործածվում էին եզակի նշանակությամբ, ընդ որում՝ հաճախ եզականաձև տարբերակի հետ և գրեթե առանց իմաստային տարբերության. հմմտ. *ընթաց/ընթացք* «արագ ընթանալը, գնալը նն» (ՆՀԲ<sup>3</sup>, հ. 1, էջ 776), *գնաց/գնացք* «գնալը, երթալը նն» (ՆՀԲ, հ. 1, էջ 564), *անց/անցք* «անցնելը, գնալը. անցնելու ճանապարհ նն» (ՆՀԲ, հ. 1, էջ 248), *ել/ելք* «դուրս ելնելը նն» (ՆՀԲ, հ. 1, էջ 648) նն<sup>4</sup>: Նմանատիպ դեպքերը և *ք*-ն նորանոր բառերի վրա տարածելու վերը նշված միտումը (եզակի նշանակության պահպանմամբ) հետզհետե թուլացնում էին *ք* ձևույթի բուն հոգնակերտական արժեքը՝ առաջացնելով նոր հոգնակերտի անհրաժեշտություն: Անշուշտ լեզվական համակարգի այդ ներքին պահանջմունքի թելադրանքով էլ հենց հին հայերենի որոշ հավաքական հոգնակերտ մասնիկներ (հատկապես՝ *եսար*-ը) արդէն 5-րդ դ. սկսում են գործածվել նաև սովորական հոգնակերտների արժեքով, և այդ միտումը տիրապետող է դառնում հետագայում<sup>5</sup>: Այդ հավաքական հոգնակերտները, որոնք ի սկզբանե հոլովվում էին եզականաձև (հիմնականում՝ **Ո** հոլովմամբ)<sup>6</sup>, սովորական հոգնակերտներ դառնալուց հետո էլ շարունակում են պահպանել իրենց հոլովական տիպը և դրանով իսկ՝ հոլովական և

<sup>1</sup> **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, էջ 82:

<sup>2</sup> Նույն տեղում, մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, էջ 82, ծան. 43:

<sup>3</sup> Այս և հետագա օրինակների դեպքում ՆՀԲ նշումով հղում է տրվում *Նոր բարգիւրք հայկազեան լեզուի*, հ. 1-2 (Վենետիկ, 1836-1837) բառարանին:

<sup>4</sup> Հմմտ. նաև **Meillet A.**, *Altarmenisches Elementarbuch*, S. 30:

<sup>5</sup> Տե՛ս **Այտընեան Ա.**, նշվ. աշխ., մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, էջ 79-83 և էջ 79-80-ի ծան. 35, 36, 37, մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 5, ծան.: Հմմտ. նաև **Lamberterie Ch. de**, *Le pluriel en arménien classique // « Faits de langues », 1993, n° 2, p. 164-167:*

<sup>6</sup> Հմմտ. **Այտընեան Ա.**, նշվ. աշխ., մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, էջ 79, մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 8, ծան.: Տե՛ս նաև **Karst J.**, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1901, S. 214:

թվային իմաստների առանձնական արտահայտությունը: Հետևաբար արդեն միջին հայերենից սկսած՝ կուտակական հոլովաթվային թեքայթները առանձնական հոլովանիշ և թվանիշ կազմիչներով փոխարինելու գործընթացը (*եար/նեար > էր/նէր* հոգնակերտի հետագա ընդհանրացմամբ և վերջնական հաղթանակով. հմմտ. հ. հայ. եզ. ուղղ. *ազգ*, հոգ. ուղղ. *ազգ-ք*, հոգ. սեռ.-տր.-բաց. *ազգ-ա-ց*, միջին և արդի հայ. հոգ. ուղղ. *ազգ-էր-Օ* (< հ. հայ. հվք. հոգ. -*էար- Օ*), միջին հայ. հոգ. սեռ.-տր. *ազգ-էր-ոյ/ու*, արդի արևմտահայ. հոգ. սեռ.-տր. *ազգ-էր-ու* (< հ. հայ. -*էր-ո-յ*), արդի արևելահայ. հոգ. սեռ.-տր. *ազգ-էր-ի* նն), կարծում ենք, սովորական հոգնակերտներ դարձած նախկին հավաքական հոգնակերտների եզականաձև հոլովման ուղղակի և միանգամայն սպասելի հետևանք էր, այլ ոչ թե շրջակա լեզուների (այդ թվում՝ թուրքերենի) ազդեցության արդյունք, ինչպես ենթադրվում է սովորաբար<sup>1</sup>: Եվ հատկանշական է, որ հին հայերենում հավաքական հոգնակերտները սովորական հոգնակերտների արժեքով վկայված են ժամանակի ժողովրդախոսակցական լեզվին առավել հավատարիմ լեզվով գրող հեղինակների (Փ. Բուզանդ, Ղ. Փարպեցի) մոտ, որոնք սովորաբար ուրիշ դեպքերում էլ իրենց գործածած քերականական ձևերով ազդարարում են հետագայում լայն թափ առած համաբանական-ձևաբանական փոփոխությունների սկիզբը՝ տալով դրանց առաջին վկայությունները<sup>2</sup>: Իհարկե մենք չենք բացառում, որ շրջակա լեզուների հետ շփումը կարող էր այս կամ այն չափով նպաստել հայերենի՝ ներհամակարգային պայմանավորվածություն ունեցող միտումի իրացմանը, բայց կարծում ենք՝ վերը բերված փաստերի լույսի ներքո ճիշտ չէր լինի այդ հնարավոր լեզվական ազդեցությանը վճռորոշ դեր վերագրել:

Միջին հայերենից սկսած՝ տարբեր հոլովական տիպերը մեծ չափով միօրինակացման են ենթարկվել, որին նպաստել են, մի կողմից, եզականաձև հոլովվող նոր հոգնակերտների (մասնավանդ *էր-ի*) լայն կիրառությունը, մյուս կողմից՝ գործիականի *ույ* վերջավորության ընդհանրացումն ու տարածումը գրեթե բոլոր հոլովական տիպերի վրա<sup>3</sup>: Ի տարբերություն հին հայերենի, որտեղ հիմքակազմիչ ձայնավորը հետևողականորեն հանդես էր գալիս գրեթե բոլոր թեք հոլովներում, միջին հայերենում այդ դրությունը խախտվում է գործիականի *ույ* (մասամբ էլ բացառականի *է*) վերջավորության ընդհանրացման

<sup>1</sup> Տե՛ս օրինակ՝ **Matzinger J.**, նշվ. աշխ., էջ 137, **Chirikba V. A.**, The Problem of the Caucasian Sprachbund // **Muysken P.** (ed.), From Linguistic Areas to Areal Linguistics, Amsterdam/Philadelphia, 2008, p. 53, **Scala A.**, Armenian and Morphological Interference // **Dum-Tragut J.** and **Bläsing Uwe** (eds.), Cultural, Linguistic and Ethnological Interrelations In and Around Armenia, Cambridge Scholars Publishing, 2011, p. 152, **Igartua I.**, From Cumulative to Separative Exponence in Inflection: Reversing the Morphological Cycle // *Language*, 2015, vol. 91, n° 3, p. 708:

<sup>2</sup> Հմմտ. **Սյունեան Ա.**, նշվ. աշխ., մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, հատկապէս՝ էջ 58-103:

<sup>3</sup> Հմմտ. **Karst J.**, նշվ. աշխ., էջ 141-142, 147, 150-153, **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 46, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975, էջ 8-9:

հետևանքով: Արդ, հաճախ «հոլովման ընթացքում յուրաքանչյուր հոլով հանդես է բերում վերջավորության միայն իրեն հատուկ ձայնավորում...: Ստեղծվում է մի այնպիսի վիճակ, երբ հոլովումների դասակարգումը ըստ առանձին տիպերի հնարավոր է միայն սեռական-տրական հոլովածների հիման վրա»: Այդ պարագայում բնականաբար նախկին հիմքակազմիչ ձայնավորները լիովին հոլովական վերջավորությունների կարգավիճակ են ձեռք բերում մասամբ ինքնուրույնաբար, մասամբ էլ բուն վերջավորություններին ձուլմամբ: Ընդ որում՝ հիմքակազմիչ ձայնավորների վերածվելը հոլովական ցուցիչների և, մյուս կողմից, ներքին թեքման էլ ավելի սահմանափակումը (նախկինում բաղաձայնական հիմքով հոլովական տիպին պատկանող բազմաթիվ բառերի՝ ձայնավորական հիմքով հոլովական տիպին անցմամբ<sup>2</sup>) իրենց հերթին հանգեցնում են նախկին հոլովական հիմքային տարբերակների մեծ մասի վերացմանը և ներհարացույցային բազմահիմքության երևույթի<sup>3</sup> սահմանափակմանը, այնպես որ ուղիղ և թեք հոլովական հիմքերի հակադրությունը արդի հայերենում պահպանվել է միայն որոշ հոլովական տիպերի դեպքում. օր.՝ *օր-/օր-վան-* (հմմտ. եգ. բաց. *օր-վան-ից*, *օր-ից*, եգ. գործ. *օր-ուլ*, հոգ. սեռ.-տր. *օր-եր-ի*), *հայր-/հոր-* (հմմտ. եգ. բաց. *հոր-ից*, եգ. գործ. *հոր-ուլ*, հոգ. ուղղ. *հայր-եր*, հոգ. սեռ.-տր. *հայր-եր-ի*), *ընկեր-/ընկեր-ոջ-* (հմմտ. եգ. բաց. *ընկեր-ոջ-ից*, եգ. գործ. *ընկեր-ոջ-ուլ*, հոգ. սեռ.-տր. *ընկեր-ներ-ի* ևն): Հետևաբար տարբերակայնության հատկանիշը արդի հայերենում խիստ սահմանափակ դրսևորում ունի: Ինչ վերաբերում է ձուլման հարաչափին, միջին և արդի հայերեններում մասնիկավորման կցող բնույթը ընդհանուր առմամբ պահպանվել է: Թերևս կարելի էր մտածել, թե *ի* հանգով բազմավանկ բառերի եզակի թվի թեք հոլովներում մասնիկավորումը ոչ գծային բնույթ է ձեռք բերել, եթե ընդունենք, որ համաժամանակյա տեսանկյունից տեղի է ունենում հիմքի վերջահանգ *ի* ձայնավորի կորուստ թեք հոլովական վերջավորություններից առաջ<sup>4</sup>. հմմտ. եգ. ուղղ.-հայց. *այգի-Օ*, հոգ. ուղղ.-հայց. *այգի-ներ-Օ*, հոգ. սեռ.-տր. *այգի-ներ-ի*, մյուս կողմից՝ եգ. սեռ.-տր. *այգ-ու*, եգ. բաց. *այգ-ուց*, եգ. գործ. *այգ-ուլ* ևն: Բայց կարծում ենք՝ ավելի ճիշտ կլիներ *այգի-/այգ-* հիմքային տարբերակների փոխհարաբերությունը դիտել որպես բազմահիմքության դրսևորում: Ըստ այդմ՝ արդի հայերենում թեք հոլովական հիմքերը կազմվում են մասամբ ուղիղ հիմքին թեք հիմքակազմիչ մասնիկի ավելացմամբ (*օր-/օր-վան-*, *ընկեր-/ընկեր-ոջ-*), մասամբ՝ ուղիղ հիմքին ներքին թեքմամբ (*հայր-/հոր-*), իսկ *ի* հանգով բազմավանկ բառերի դեպքում՝ ուղիղ հիմքի վերջահանգ *ի* ձայնավորի անկմամբ (*այգի-/այգ-* ևն): Իհարկե այս վերջին տիպը, որը՝ իբրև գործուն

<sup>1</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի..., էջ 8:

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում, էջ 16:

<sup>3</sup> Հմմտ. Ավետյան Ս., Որքանո՞վ թեքական կամ կցական է իրականում հին հայերենի անվանական հոլովումը:

<sup>4</sup> Հմմտ. Bickel B., Nichols J., Inflectional Morphology, p. 182-183:

օրինաչափություն, հանդես է գալիս միջին հայերենի շրջանից սկսած<sup>1</sup>, բնորոշ է արդի հայերենի միայն արևելահայ տարբերակին, իսկ արդի արևմտահայերենում այն չի պահպանվել, քանի որ *ի* հանգով բազմավանկ բառերը այստեղ անցել են *ի* հոլովման. հմմտ. եգ. ուղղ.-հայց. *այգի-Օ*, եգ. սեռ.-տր. *այգի-ի*, եգ. բաց. *այգի-է*, եգ. գործ. *այգի-ով* /ն<sup>2</sup>: Նախկին ոչ գծային ձևաբանական միջոցներից ներքին թեքումը արդի հայերենում հանդես է գալիս միայն սակավաթիվ դեպքերում և մնացորդային տեսքով (*հայր-հոր, տուն-տան* նն), եթե հաշվի չառնենք *-ություն* ածանցով կազմությունները: Թեև վերջնականակային շարժական շեշտը դեռ գործուն օրինաչափություն է, բայց ի տարբերություն հին հայերենի, որտեղ ձայնավորական հիմքով հոլովական տիպերի թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում ուղղականը և հայցականը շեշտի դիրքով հակադրվում էին թեք հոլովներին, արդի հայերենում *եր/ներ* հոգնակերտի շնորհիվ բոլոր հոլովական տիպերի դեպքում արդեն միայն եզակի ուղղական-հայցականն է շեշտի դիրքով հակադրվում մնացած հոլովաձևերին, այդ թվում՝ հոգնակի ուղղական-հայցականին: Իսկ շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները արդի գրական արևելահայերենում և արևմտահայերենում այլևս գործուն օրինաչափություն չեն, այլ բացառապես ավանդական բնույթ են կրում և, որպես արդեն զգալիորեն քերականացված և բառանացված ձևահնչույթային հերթագայություններ՝ շարունակաբար ենթարկվում են համաբանական համահարթեցման ընթացիկ միտումի ազդեցությանը<sup>3</sup>: Իհարկե արդի գրական արևմտահայերենում համաբանական համահարթեցման գործընթացը արդեն գրեթե ավարտված է, և շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները պահպանվել են միայն առանձին մնացորդների տեսքով<sup>4</sup>:

Այսպիսով՝ վերը կատարված քննության արդյունքները կարող ենք ամփոփել հետևյալ կերպ: Հ.-ե. անվանական հոլովման տիպաբանական առանձին հատկանիշները հայերենում փոփոխության են ենթարկվել ժամանակագրական տարբեր փուլերում: Այդ առումով հին հայերենը եզակի ուղղական-հայցականի զրոյական վերջավորությամբ և միաժամանակ կուտակական հոլովաթվային թեքույթներով ոչ կանոնիկ անցումային փուլ է ներկայացնում տիպաբանորեն կանոնիկ հ.-ե. լեզվավիճակի և նույնքան կանոնիկ հետհինհայերենյան վիճակի միջև: Հետագայում կուտակական հոլովաթվային թեքույթների փոխարինումը առանձնական հոլովանիշ և թվանիշ կազմիչներով եղել է նախկին հավաքական հոգնակերտների եզականաձև հոլովման ուղ-

<sup>1</sup> Հմմտ. Karst J., նշվ. աշխ., էջ 152-153:

<sup>2</sup> Հմմտ. Չոլաքեան Յ., Արևմտահայերենի քերականություն, Ա. գիրք, Երևան, 2017, էջ 86:

<sup>3</sup> Տե՛ս Ավետյան Ս., Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն) // «ՀՀ», 2020, թիվ 2, էջ 206-219:

<sup>4</sup> Հմմտ. Չոլաքեան Յ., նշվ. աշխ., էջ 84-86, 58:

ղակի և անխուսափելի հետևանք, այլ ոչ թե շրջակա լեզուների ազդեցության արդյունք: Իսկ հավաքական հոգնակերտների վերածվելը սովորական հոգնակերտների տեղի է ունեցել հայերենի ներհամակարգային պահանջմունքի թելադրանքով, քանի որ *ք*-ն նաև զուտ բառակազմական գործառույթով կիրառելու աճող միտումը հետզհետե թուլացնում էր *ք* ձևույթի բուն հոգնակերտական արժեքը՝ առաջացնելով նոր հոգնակերտի անհրաժեշտություն: Մասնիկավորման կցող բնույթը ինչպես հին, այնպես էլ միջին և արդի հայերեններում դրսևորվում է առանց բացառության: Չայնդարձը, որը հին հայերենում դեռ զգալի կիրառություն ունի, միջին և արդի հայերեններում գրեթե վերացել է, իսկ շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները արդի հայերենում արդեն գտնվում են վերացման ճանապարհին՝ շարունակաբար ենթարկվելով համաբանական համահարթեցման: Թեև վերջնականապես շարժական շեշտը դեռ գործուն օրինաչափություն է, բայց արդի հայերենում այն նվազագույն գործառույթային ծանրաբեռնվածություն ունի: Տարբերակայնությունը ևս արդի հայերենում խիստ սահմանափակ դրսևորում ունի, քանի որ հոլովական տիպերի տարբերությունը պահպանվել է հիմնականում միայն եզակի սեռական-տրականում:

#### **Մարգիս Ավետյան – *Անվանական հոլովման տիպաբանական զարգացումը հայերենում***

Սույն հոդվածում դիտարկվում են հնդեվրոպական անվանական հոլովման տիպաբանական փոփոխությունները հայերենում ընդհուպ արդի հայերենի փուլը: Առանձին տիպաբանական հատկանիշները փոփոխվել են ժամանակագրական տարբեր փուլերում: Այդ տեսանկյունից հին հայերենը՝ եզակի ուղղականի զրոյական վերջավորությամբ, բայց միևնույն ժամանակ կուտակական հոլովաթվային ցուցիչներով, տիպաբանորեն անցումային լեզվավիճակ է ներկայացնում հնդեվրոպական նախալեզվի թեքական և միջին հայերենի (ինչպես նաև արդի հայերենի) կցական հոլովման տիպի միջև: Փորձ է արվում փաստարկել, որ միջին հայերենում անվանական հոլովման տիպաբանական անցումը կուտակական արտահայտողականությունից առանձնական արտահայտողականության պայմանավորված չի եղել հարևան լեզուների ազդեցությամբ, ինչպես ենթադրվում է սովորաբար, այլ դա անմիջական և միանգամայն սպասելի հետևանք է եղել այն բանի, որ նոր հոգնակերտ մասնիկները առաջացել են հին հայերենի եզականաձև հոլովվող հավաքական հոգնակերտներից: Մյուս կողմից՝ նախկին հավաքական հոգնակերտների՝ կանոնավոր (սովորական) հոգնակերտների վերածվելու գործընթացը նույնպես ունեցել է ներհամակարգային պայմանավորվածություն: Մասնավորապես՝ այն հանգամանքը, որ հին հայերենի *ք* հոգնակերտը աճող միտում էր ցուցաբերում գործառելու նաև որպես զուտ բառակազմական ածանց, անխուսափելիորեն թուլացնում էր նրա հոգնակերտ արժեքը՝ առաջացնելով նոր հոգնակերտի անհրաժեշտություն:

## Տարգիս Ավետյան – *Типологическое развитие именного склонения в армянском языке*

**Ключевые слова** – древнеармянское именное склонение, кумулятивные падежно-числовые флексии, сепаративные падежные и числовые показатели, неканонический переходный этап, показатели коллективной множественности

В статье предлагается обзор типологических изменений, которым подвергалось индоевропейское именное склонение вплоть до современного армянского периода. Индивидуальные типологические признаки изменялись на разных хронологических этапах. В этом отношении древнеармянское именное склонение с нулевым окончанием номинатива единственного числа и в то же время кумулятивными падежно-числовыми флексиями типологически является переходным этапом от индоевропейского флективного к среднеармянскому (а также новоармянскому) агглютинативному типу словоизменения. Обосновывается идея о том, что типологический переход именного склонения от кумулятивного к сепаративному выражению граммем в среднеармянском языке не был вызван влиянием соседних языков, как обычно предполагается, а скорее это было прямое и вполне ожидаемое последствие того, что новые показатели множественного числа восходят к древнеармянским суффиксам коллективной множественности, которые склонялись в единственном числе. С другой стороны, сам процесс превращения показателей коллективной множественности в регулярные показатели множественного числа тоже имел внутрисистемную мотивацию. В частности, возрастающая тенденция древнеармянского показателя множественного числа *p* одновременно функционировать и в качестве чисто деривационного суффикса неизбежно ослабляла его роль как маркера множественности, тем самым сделав необходимой потребность в новом показателе множественного числа.

## Sargis Avetyan – *Typological Development of the Noun Declension in Armenian*

**Key Words** – the Old Armenian noun declension, cumulative case-number inflections, separative case- and number-markers, a non-canonical transitional stage, collective plural markers

This article offers an overview of the typological changes that the Indo-European noun declension has undergone up to the Modern Armenian period. The individual typological features have changed at different chronological stages. In this regard the Old Armenian noun declension with its zero-marking of the nominative singular and at the same time cumulative case-number exponents typologically represents a transitional stage from the I.-E. flective to the Middle Armenian (as well as Modern Armenian) agglutinative type of inflection. It is argued that the typological shift of the nominal declension from cumulative to separative exponence in Middle Armenian was not triggered by the influence from neighbouring languages, as usually believed, but rather it has been a direct and quite expected consequence of the new plural markers going back to Old Armenian collective plural suffixes, the latter being inflected in singular. On the other hand, the very process of the collective plural suffixes developing into regular plural markers had inner-systemic motivation as well. Specifically, the growing tendency for the Old Armenian plural marker *p* to function also as a purely derivational (word-building) suffix inevitably weakened its plural-marking value necessitating a new plural marker.

Ներկայացվել է 04.09.2020

Գրախոսվել է 12.09. 2020

Ընդունվել է տպագրության 14.04.2021